https://doi.org/10.46991/S&L/2023.95.068

ԳՈՒՅՔՆ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՃՌԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՆԴԻՍԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Գարիկ Գևորգյան
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Վինդիկացիոն հայցը սեփականության իրավունքի պաշտպանության միջոցներից է, որի միջոցով սեփականատերը կարող է պաշտպանել իր գույքը տիրապետելու և օգտագործելու իրավազորությունները: Գիտության մեջ վինդիկացիոն հայցը բնորոշում են հետևյալ կերպ. վինդիկացիոն հայցը բացարձակ հայցերի տեսակ է, որոնք ներկայացվում են իրային իրավունքը խախտած ցանկացած երրորդ անձի դեմ[1]: Այլ կերպ՝ վինդիացիոն հայցը բնորոշվում է որպես գույքը չտիրապետող անձի հայց գույքը ուրիշի ապօրինի տիրապետումից վերադարձնելու պահանջի մասին[2]: Վինդիկացիոն հայցը դիտարկվում է որպես գույքը չտիրապետող սեփականատիրոջ արտապայմանագրային պահանջ գույքը փաստացի տիրապետողի դեմ՝ այն բնեղենով վերադարձնելու մասին[3]: Կարծում ենք, որ վինդիկացիոն հայցի առավել հստակ բնորոշումը տրված է երրորդ տարբերակում, սակայն վերապահմամբ, որ վինդիկացիոն հայց կարող են ներկայացնել ոչ միայն սեփականատերերը, այլ նաև գույքը տիրապետելու և օգտագործելու իրավունք ունեցող այլ անձը, ինչպես նաև պահանջը ներկայացվում է այնպիսի փաստացի տիրապետողի դեմ, որը գույքը տիրապետում է առանց օրենքով նախատեսված հիմքերի, այսինքն՝ ապօրինի տիրապետողի դեմ:

Սակայն պետք է արձանագրել, որ իրավունքի պաշտպանությունը չի ավարտվում հայց ներկայացնելով և հարուցված գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելով, քանի որ խախտված իրավունքը կարող է վերականգնվել միայն այդ դատական ակտի կատարման արդյունքում, ինչը վկայում է այն մասին, որ եզրափակիչ դատական ակտի կատարումը իրավունքի պաշտպանության գործընթացի անբաժանելի մաս է: Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից վերադարձնելու գործերով կայացված վճիռների հարկադիր կատարման առանձնահատկությունները, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումները, որոնք կարող են ազդել սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետության վրա:

Գույքը ապօրինի տիրապետումից հետ պահանջելու մասին վճիռների հարկադիր կատարման առանձնահատկությունները ամրագրված են «Դատական ակտե-

[1] Տե՛ս **Маттеи У., Суханов Е.А.** Основные положения права собственности. –М.: Юристь, 1999, էջ 365:
[2] Տե՛ս **Толстой Ю.К.** Содержание и гражданско-правовая защита права собственности в СССР. – Ленинград: Изд-во ЛГУ, 1955, էջ 101:
[3] Տե՛ս Гражданское право: учеб.: в 3 т. Т.1. / отв. Ред. А.П. Сергеев, Ю.К. Толстой. – М.: ТК Велби, Изд-во Проспект, 2004, էջ 553:

րի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) «Վտարման վերաբերյալ կատարողական թերթի, կատարողական մակագրության թերթի կատարումը» վերտառությամբ 64-րդ հոդվածում: Նախ և առաջ պետք է արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «վտարում» եզրույթը չի օգտագործվում, և նման պաշտպանության միջոց նախատեսված չէ, սակայն իրավակիրառ պրակտիկայում շատ են դեպքերը, երբ վինդիկացիոն հայցը անվանվում է «վտարման հայց»: Այս առումով գտնում ենք, որ հիմնավոր են թիվ ԼԴ2/0138/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.11.2020թ. որոշման վերաբերյալ հատուկ կարծիք հայտնած դատավոր Կ. Չիլինգարյանի եզրահանգումները այն մասին, որ «վտարել բնակարանից» արտահայտությունը չի կարող դիտարկվել որպես առանձին և ինքնուրույն պահանջ, քանի որ բնակելի տնից վտարումը սոսկ այն եղանակն է, որի գործադրմամբ պետք է իրականացվի բնակելի տունը պատասխանողի ապօրինի տիրապետումից ազատելու կամ, այլ կերպ ասած, բնակելի տունը պատասխանողի ապօրինի տիրապետումից հայցվորին վերադարձնելու գործընթացը:

Օրենքը կարգավորում է նաև աճուրդի ներկայացված շինությունից տիրապետող սեփականատիրոջը (օրինական տիրապետողին) վտարելու հարաբերությունները, սակայն այդ հարցերը սույն հոդվածում ուսումնասիրման առարկա չեն դառնա:

Օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Վտարումը կատարողական թերթում կամ կատարողական մակագրության թերթում նշված անշարժ գույքը վտարվողից (վտարվողներից), <u>ինչպես նաև այն անձանցից, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով</u>, և նրան (նրանց) գույքից ազատելն ու ազատված շենքից օգտվելն արգելելն է»:

Վերոգրյալից ելնելով՝ անհրաժեշտ է անդրադարձ կատարել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Օրենքի 67-րդ հոդվածի այն դրույթը, որը թույլ է տալիս հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը (այսուհետ նաև՝ Ծառայություն) վտարել դատավարության մասնակից չհանդիսացած անձանց, որոնք չունեն գույքը տիրապետելու որևէ գրանցված իրավունք, համահունչ է դատական ակտը միայն դրա հասցեատերերի համար պարտադիր լինելու սկզբունքի և Օրենքի նպատակների հետ:

Օրենքի 67-րդ հոդվածից հետևում է, որ Ծառայությունը գույքն ազատում է ինչպես վտարվողներից, այսինքն՝ դատավարության կողմ հանդիսացող անձանցից, որոնք, դատարանի վճռի համաձայն, գույքը պետք է վերադարձնեն սեփականատիրոջը, այնպես էլ այլ անձանցից, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով: Հատկանշականը այն է, որ օրենսդիրը Ծառայությանը լիազորություն է տրամադրել՝ բացի վճռի հասցեատիրոջից, նաև այլ անձանց վտարել գույքից՝ անկախ դրա մասին վճռում, կատարողական թերթում նշումի առկայության: Այսինքն՝ Ծառայությանը տրամադրվել է հայեցողական լիազորություն, որի շնորհիվ վերջինս դուրս է գալիս դատարանի կողմից վճռի եզրափակիչ մասում սահմանված կարգադրությունից և ինքնուրույն որոշում է այլ անձանց կողմից գույքը տիրապետելու իրավաչափության հարցը:

Գտնում ենք, որ նշված կարգավորումը խնդրահարույց է, մասնավորապես չի բխում դատական ակտի պարտադիրության սկզբունքից, քանի որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի[1] համաձայն՝ օ-

[1] Նույնաբովանդակ իրավանորմ ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մասում:

ինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար:

Դատական ակտի պարտադիրության սկզբունքը ավելի լայն է մեկնաբանել ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով, որը արտահայտել է իրավական այն դիրքորոշումը, որ պարտադիրության հատկանիշը ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում:

Սակայն նշվածը վերաբերվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտը երրորդ անձանց կողմից հաշվի առնելուն, հարգելուն, դրա կատարմանը չխոչընդոտելուն և ոչ մի կերպ չի կարող մեկնաբանվել որպես դատավարության մասնակից չհանդիսացած անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը մանրամասնում է դատական ակտի պարտադիրության սկզբունքը՝ սահմանելով, որ դատարանը եզրափակիչ դատական ակտով իրավունքներ և պարտականություններ կարող է սահմանել միայն գործին մասնակցող անձանց համար:

Գիտական գրականության մեջ նույնպես նշվում է, որ վճիռը ենթակա է հարկադիր կատարման միայն դատավարությանը մասնակցած անձանց համար[1]:

Մինչդեռ, տվյալ դեպքում Օրենքով թույլատրվում է այնպիսի իրավիճակ, երբ օրինական ուժի մեջ մտած վճիռը փաստացի պարտականություն է սահմանում նաև գործին մասնակից չհանդիսացող այլ ածանց համար:

Կարելի է արձանագրել նաև, որ Օրենքի և ՀՀ դատական օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի միջև առկա է կոլիզիա, քանի որ նշված նորմերը պարունակում են հակասող կարգավորումներ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է միայն դրա հասցեատերերի համար և չի կարող պարտականություններ սահմանել դատավարության մասնակից չհանդիսացած երրորդ անձանց համար: Մինչդեռ, Օրենքի 64-րդ հոդվածի կարգավորմամբ առաջանում է այնպիսի իրավիճակ, որ վտարման մասին վճիռը տարածվում է, և դրա հարկադիր կատարումը իրականացվում է ոչ միայն դրա հասցեատերերի, այլ նաև դատավարության մասնակից չհանդիսացող այլ անձանց համար: Իսկ նշված երկու իրավանորմերի կոլիզիայի պարագայում պետք է գերակայեն ՀՀ դատական օրենսգրքի կարգավորումները, քանի որ օրենսգիրքը սահմանադրական օրենք է և ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, քան Օրենքը՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բացի դրանից, կարելի է խոսել իրավունքի սկզբունքի և իրավական նորմերի միջև կոլիզիայի մասին: Նման կոլիզիայի լուծման վերաբերյալ Ա. Ղամբարյանը նշել է հետևյալը. «Իրավունքի սկզբունքների (դրանցից բխող նորմերի) և իրավական այլ նորմերի հակասության դեպքում իրավունքի սկզբունքներին (դրանցից բխող նորմերին) նախապատվություն տալու հանգամանքը պայմանավորված է իրավունքի սկզբունքների բովանդակությամբ: Իրավունքի սկզբունքների ուժը բխում է ոչ այնքան սկզբունքների օրենսդրական ամրագրումից (պոզիտիվացումից), այլև նրանից, որ սկզբունքներն ընդունված են ողջ մարդկության կողմից, արտացոլում

[1] Տե՛ս **Гурвич М.А.** Обязательность и законная сила судебного решения // Избранные труды. Т.1. Краснодар, 2006. էջ 609:

են համամարդկային արժեքներ, պարունակում են աքսեոմատիկ ճշմարտություններ, հիմնված են կոնկրետ ժամանակի և տարածության մեջ ընդունված բարոյական նորմերի վրա: (…) Քննարկվող իրավիճակներում իրավունքի սկզբունքներն այն չափորոշիչներն են, որոնց հիման վրա իրականացվում է «contra legem» (օրենքին հակառակ) իրավակիրառում»[1]:

Տվյալ դեպքում Օրենքի կարգավորումները հակասում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտում՝ սահմանադրական օրենքում, ամրագրված դատական ակտի պարտադիրության սկզբունքին: Նման պայմաններում գտնում ենք, որ Ծառայությունը պետք է գործի օրենքին հակառակ և գործողություններ չիրականացնի դատական ակտի հասցեատեր չհանդիսացող անձանց վտարելուն ուղղված՝ հիմքում դնելով նշված իրավունքի սկզբունքը, և կարծում ենք, որ Ծառայության օրենքին հակառակ գործելը կլինի արդարացված և կպաշտպանվի իրավունքի սկզբունքների բարձր և հեղինակավոր ուժով:

Բացի դրանից, նման կարգավորումը դուրս է գալիս Օրենքի կարգավորման շրջանակներից, քանի որ Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Օրենքով սահմանվում են inter alia ՀՀ դատարանների դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովելու պայմանները և կարգը:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ *«Հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը (…)»:*

Օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված են հարկադիր կատարման միջոցները. ի թիվս այլնի՝ դրանք են՝ *կատարողական թերթում նշված որոշակի առարկաները պարտապանից առգրավելը և պահանջատիրոջը հանձնելը, կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:*

Նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ օրենսդրի նպատակն է Ծառայությանը օժտել այնպիսի լիազորություններով, որոնք ուղղված են լինելու կատարողական թերթի հարկադիր կատարումն ապահովելուն: Մինչդեռ Օրենքի 64-րդ հոդվածով Ծառայությանը լիազորվել է կիրառել հարկադիր կատարման այնպիսի միջոցներ, որոնք չեն բխում կատարողական թերթից:

Երկրորդ, Ծառայության գործողությունները կարող են հանգեցնել այնպիսի սեփականատիրոջ կամ այլ գույքային իրավունք ունեցող անձի իրավունքների խախտման, որոնց իրավունքները ճանաչվում և պաշտպանվում են օրենքի ուժով՝ անկախ իրավունքի պետական գրանցման փաստից: Մասնավորապես, նման դեպքերի ցանկը սահմանված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածում: Խնդիրներ կարող են ծագել նաև ժառանգությունը ընդունած անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված, քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵՇԴ/0230/02/11 քաղաքացիական գործով արձանագրել է, որ ընդունված ժառանգության՝ այդ թվում անշարժ գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքը ծագում է ժառանգության բացման պահից՝ անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից: Մեկ այլ՝ թիվ 3-444(ՎԴ) որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ժառանգությունն ընդունած ժառանգը օրենքի ուժով այդ գույքի սեփականատերն է:

Օրինակ, կարող է ձևավորվել հետևյալ իրավիճակը. գույքը ընդհանուր բաժնային սեփականության առարկա է: Անշարժ գույք է ներխուժել որևէ ապօրինի տիրապետող, որի հետ միաժամանակ գույքը տիրապետում է նաև բաժնային սեփականատերերից մեկի ամուսինը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ իր ամուսնու անվամբ գրանցված բաժնի համասեփականատերն

[1] **Ա. Ղամբարյան,** Իրավունքի սկզբունքների արտահամակարգային կոլիզիաները և ներհամակարգային կոնֆլիկտները // Դատական իշխանություն, N3-4/237-238, 2019, էջ 16:

է: ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0274/02/14 նախադեպային որոշմամբ սահմանվել է, որ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքն այլ անձանց կողմից ապօրինի տիրապետվելու պայմաններում բաժնային սեփականության մասնակիցներից որևէ մեկը զրկված չէ իր գույքն ապօրինի տիրապետողից հետ պահանջելու հնարավորությունից: Տվյալ դեպքում գույքի չտիրապետող համասեփականատերերից մեկը կարող է վինդիկացիոն հայց ներկայացնել գույք ներխուժած անձի դեմ: Հայցը բավարարվելու դեպքում Ծառայությունը, հայտնաբերելով, որ բացի վտարվողից գույքը տիրապետում է նաև բաժնային սեփականատերերից մեկի ամուսինը, ում իրավունքը գրանցված չէ, պարտավոր է վտարել նաև վերջինիս: Մինչդեռ ակնհայտ է, որ այդ ամուսնու սեփականության իրավունքը ճանաչվում և պետք է պաշտպանվի անկախ դրա պետական գրանցման փաստից: Արդյունքում Ծառայությունը կվտարի և կարգելի ազատված գույքից օգտվելը օրինական տիրապետողին, ինչի հետևանքով վերջինս կզրկվի իր սեփականությունից:

Այսպիսով, ակնհայտ է, որ քննարկվող իրավանորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն՝ *ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ **դատական կարգով**՝ օրենքով սահմանված դեպքերի:* Տվյալ դեպքում խախտվում է սահմանադրությամբ ամրագրված սեփականությունից դատական կարգով զրկելու երաշխիքը, քանի որ սահմանադրաիրավական իմաստով սեփականությունից զրկելը ենթադրում է ոչ միայն սեփականության իրավունքի դադարում, այլ նաև այնպիսի սահմանափակում, որի հետևանքով սեփականատերը զրկվում է իրեն պատկանող օբյեկտն իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու և այն տնօրինելու հնարավորությունից[1]:

Բացի դրանից, դատական կարգով սեփականությունից զրկելու երաշխիքը ենթադրում է նախնական և հաջորդող դատական վերահսկողություն, իսկ մասնավոր իրավահարաբերություններում պետք է գերակշռի նախնական դատական վերահսկողությունը, այսինքն՝ որևէ անձ կարող է զրկվել իր գույքից հօգուտ այլ մասնավոր անձի միայն դատարանի ակտի հիման վրա: Նշվածի մասին է վկայում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածը, որի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը իրականացնում է դատարանը, իսկ սեփականության իրավունքի տիրապետման և օգտագործման իրավազորությունների պաշտպանության համար օրենսգրքի 274-րդ հոդվածում նախատեսված է վինդիկացիոն հայցը: Մինչդեռ, տվյալ դեպքում Ծառայությունը դատավարության մասնակից չհանդիսացած մասնակիցներին զրկում է սեփականությունից հօգուտ հայցվորի՝ առանց նախնական դատական վերահսկողության:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ Օրենսդիրը նպատակ է հետապնդել սահմանել սեփականության իրավունքի պաշտպանության առավել արդյունավետ գործիքակազմ և կանխել իրավունքի չարաշահման հնարավոր դեպքերը, քանի որ վինդիկացիոն հայցի քննության ավարտից հետո ապօրինի տիրապետողը կարող է գույքը փոխանցել երրորդ անձանց, որի պատճառով սեփականատերը հետագայում այդ փաստը պարզելու դեպքում ստիպված է լինելու հարուցել հայց գույքը ապօրինի նոր տիրապետողների դեմ: Ավելին, վինդիկացիոն հայցով պատասխանողը կարող է դիտավորյալ նման գործողություններ իրականացնել՝ խոչընդոտելով հայցվորին իր սեփականության իրավունքը իրացնելու հնարավորությունից: Սակայն, Օրենսդրի ընտրած գործիքը կարող է հանգեցնել օրենքի ուժով անկախ իրավունքի գրանցումից այլ իրավատերերի իրավունքների անհամաչափ միջամտության, ինչպես նաև գործող կարգավորումները հակասության մեջ են մտնում իրա-

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. – Եր.: «Իրավունք», 2010, էջ 366:

վունքի մի շարք սկզբունքների հետ, իսկ Ծառայությանը տրամադրված լիազորությունները դուրս են գալիս վերջինիս գործունեության նպատակներից:

Բացի դրանից, դատավարական իրավունքը հայցվորին բավարար միջոցներ է տրամադրում վերը նկարագրված բացասական հետևանքները կանխելու համար: Մասնավորապես, վինդիկացիոն հայցով դիմած անձը կարող է դատարանից խնդրել՝ կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասին 6-րդ կետով նախատեսված հայցի ապահովման միջոցը՝ պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը: Գույքի վրա արգելանք դնելը inter alia ներառում է գույքը տնօրինելն արգելելը (Օրենքի 44 հոդված): Իսկ տնօրինման իրավազորությունը ներառում է գույքի ոչ միայն իրավական, այլ նաև փաստացի ճակատագիրը որոշելու իրավունքը[1]: Գույքի փաստացի ճակատագիրը որոշելը կարող է դրսևորվել գույքը այլ անձանց տիրապետությանը փոխանցելով, գույքը ոչնչացնելով, բաժանելով կամ այլ գործողություններով:

Ուստի կարելի է եզրակացնել, որ հարկադիր կատարողի կողմից բացի կատարողական թերթում նշված անձանցից գույքն ազատելուն ուղղված հարկադիր կատարման միջոցները իրավաչափ չեն, դրանք չեն բխում Ծառայության գործունեության նպատակներից, քանի որ այն վեճ լուծող մարմին չէ, որը կարող է սեփական հայեցողությամբ պարզել այս կամ այն անձի, ում վերաբերյալ կատարողական թերթ չկա, գույքի տիրապետման իրավաչափությունը:

Երկրորդ հարցն այն է, թե արդյո՞ք հնարավոր է դատարան ներկայացնել պահանջ՝ հայցվորին հայտնի ապօրինի տիրապետողներից զատ ցանկացած երրորդ անձանց ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու պահանջ: Նման պահանջ ներկայացնելը անթույլատրելի է, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը պետք է պարունակի պատասխանողների տվյալները, որոնց դեմ ներկայացվում է հայցվորի նյութաիրավական պահանջը:

Սակայն, եթե նման պահանջը համարվի թույլատրելի և հայցադիմումը ընդունվի վարույթ, ապա այդ մասով հայցը չի կարող բավարարվել, քանի որ եթե վճռի եզրափակիչ մասում սահմանվի, որ գույքից պետք է վտարել պատասխանողին, ինչպես նաև այլ անձանց, որոնց օգտագործման իրավունքը գրանցված չէ օրենքով սահմանված կարգով, ապա դատարանը կկայացնի պայմանով վճիռ, ինչը անթույլատրելի է:

Դատական ակտի հատկանիշներից մեկը անպայմանականությունն է, այսինքն՝ դրանում չեն կարող նշվել պայմաններ, որոնցից կախման մեջ է դրվում կայացված դատական ակտի կատարումը: Պայմաններ սահմանելը գործնականում դատական ակտը (վճիռը) դարձնում է անկատարելի, որովհետև դրա կատարման փուլում կողմերի միջև կարող են նոր վեճեր ծագել այն հարցի շուրջ, թե այդ պայմանները վրա հասել են, թե՝ ոչ: Այդ վեճերի լուծման համար անհրաժեշտություն կառաջանա կրկին դիմելու դատարան, կրկին քննելու գործ և կրկին կայացնելու վճիռ, ինչը քաղաքացիական դատավարությունում անթույլատրելի է[2]:

Սակայն դատական պրակտիկայում կարելի է հանդիպել նման վճիռների, օրինակ՝ թիվ ԱՎԴ/0966/02/21 քաղաքացիական գործով կայացված վճռով դատարանը, բացի պատասխանողից, պարտավորեցրել է նաև վերջինիս հետ փաստացի բնակվող և օրենքով սահմանված կարգով օգտագործման իրավունքը չգրանցած

[1] Տե՛ս նույն տեղը էջ 361:

[2] Տե՛ս **Ս. Գ. Մեղրյան**, Առաջին ատյանի դատարանի դատական ակտերի իրավաբանական բնույթը և որակական կայունության ապահովման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, Եր., ԵՊՀ հրատ., 2020, էջ 104:

անձանց իրենց գույքով հանդերձ ազատել հայցվորին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը և այն հանձնել սեփականատիրոջը:

Կարելի է համաձայնել, որ գործող կարգավորումը ապահովում է հայցվոր սեփականատիրոջ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը՝ վերջինիս զերծ պահելով իր գույքը վերադարձնելու նոր վեճերից, սակայն խաթարվում է դատական ակտի՝ միայն դրա հասցեատերերի համար պարտադիրության սկզբունքը, իսկ որոշ դեպքերում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ Ծառայությունը հարկադիր միջոցներ կկիրառի օրինական տիրապետողի նկատմամբ՝ անհամաչափ սահմանափակելով վերջինիս սեփականության իրավունքը, ինչը չի ապահովում անձին դատական կարգով սեփականությունից զրկելու սահմանադրաիրավական երաշխիքը:

Ամփոփելով ցանկանում ենք նշել, որ Օրենքի գործող կարգավորումները խնդրահարույց են, հակասում են իրավունքի մի շարք սկզբունքների և որոշ դեպքերում կարող են հանգեցնել սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակման: Սակայն, գույքը ապօրինի տիրապետողի կողմից իրավունքի չարաշահմամբ այլ անձանց փոխանցելու հետևանքով էական խոչընդոտներ կարող են ստեղծվել սեփանատիրոջ իրավունքների պաշտպանության համար, ինչը կարող է վերածվել նոր ապօրինի տիրապետողների հետ վեճերի անվերջ շղթայի: Ուստի կարծում ենք, որ օրենսդիրը պետք է նախատեսի իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիքակազմեր, սակայն պետք է ապահովվի նախնական դատական վերահսկողությունը Ծառայության գործողությունների նկատմամբ: Օրինակ, հնարավոր է բարելավել գործող կարգավորումը և թույլատրել Ծառայությանը կատարելու երրորդ անձանց վտարման գործողությունները՝ նախապես ստանալով դատարանի թույլտվությունը:

ПРИНУДИТЕЛЬНОЕ ИСПОЛНЕНИЕ РЕШЕНИЯ СУДА ОБ ИСТРЕБОВАНИИ ИМУЩЕСТВА ИЗ ЧУЖОГО НЕЗАКОННОГО ВЛАДЕНИЯ ПО ОТНОШЕНИЮ К ЛИЦАМ, НЕ УЧАСТВОВАВШИМ В СУДОПРОИЗВОДСТВЕ

Гарик Геворгян
Аспирант кафедры Российско-Армяского университета

Предметом исследования настоящей статьи являются особенности принудительного исполнения судебных решений об истребовании недвижимого имущества из чужого незаконного владения в Республике Армения. Этап принудительного исполнения является решающим в процессе защиты прав, особенно, указанное актуально для исков о присуждении, каковым является и виндикационный иск, которые предполагают принуждение ответчика к совершению действий фактического характера: передача вещи собственнику. В частности, рассматриваются законодательные нормы, которые уполномочивают службу принудительного исполнения выселить не только адресата судебного решения, но также и третьих лиц, которые не имеют зарегистрированного права пользования недвижимым имуществом. Распространение действия решения суда о выселении на третьих лиц дает основание полагать о том, что между собственником и неопределенным кругом лиц, которые на момент

принудительного исполнения решения суда незаконного владеют вещью, складываются абсолютные охранительные правоотношения, в то время как господствующей в науке позиции охранительные правоотношения всегда имеют относительный характер. Данные нормы рассматриваются в свете принципа обязательности судебного акта только для участников судопроизводства и конституционной гарантии лишения собственности в судебном порядке.

EXPANDING COMPULSORY ENFORCEMENT OF EVICTION JUDGEMENT TO THIRD PARTIES NOT PARTICIPATED IN LITIGATION

Garik Gevorgyan
PhD Student at the Russian Armenian University

In this article the author examines peculiarities of enforcing court decisions on the recovery of immovable property from illegal possession in the Republic of Armenia. The stage of enforcement is crucial in the process of protecting rights, particularly relevant to claims for awarding, such as vindicatory claims, which involve compelling the defendant to perform factual actions, such as transferring the property to the owner. Specifically, the article examines legislative provisions authorizing the enforcement service to evict not only the addressee of the court decision but also third parties who do not have registered property rights. The extension of the court's eviction decision to third parties gives reason to believe that absolute protective legal relationships arise between the owner and an indefinite circle of individuals who illegally possess the property at the time of enforcement, while the prevailing position in legal science is that protective legal relationships always have a relative nature. These provisions are considered in light of the principle of the binding nature of judicial acts only for the participants in the judicial process and due process of law constitutional guarantee.

Բանալի բառեր - *վինդիկացիոն հայց, վտարման հայց, հարկադիր կատարում, սեփականության իրավունք, փաստացի տիրապետում, ապօրինի տիրապետում, անշարժ գույք, իրավունքի գրանցում*
Ключевые слова: *виндикационный иск, иск о выселении, принудительное исполнение, право собственности, фактическое владение, незаконное владение, недвижимая вещь, регистрация прав*
Keywords: *vindication claim, eviction claim, compulsory enforcement, right to property, factual possession, adverse possession, immovable property, registration of rights*